

# ԸՆԿԵՐ ՆԻԿԻՏԱ ՍԵՐԳԵԵՎԻՉ ԽՐՈՒՇՉԵՎԻՆ

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կո-
միտեն և ՍՍՌ Միության Մինիստրների Սովետը ջերմորեն ողջունում են Ձեզ,
Լենինի հավատարիմ աշակերտին և Ստալինի զինակցին, Կոմունիստական
պարտիայի և Սովետական պետության ականավոր գործչին, բանվոր դասա-
կարգի փառապանծ զավակին՝ Ձեր վաթսունամյակի օրը:

Կոմունիստական պարտիան և սովետական ժողովուրդը բարձր են գնա-
հատում Ձեր ծառայությունները կոմունիզմի գործի համար մղվող պայքարում,
որին Դուք նվիրաբերել եք Ձեր ամբողջ կյանքը:

Քաղաքացիական պատերազմի դաժան ժամանակներում, խաղաղ սոցիա-
լիստական շինարարության պայմաններում, Հայրենական Մեծ պատերազմի
ծանր ժամանակ և այժմ մեր երկրում կոմունիստական հասարակություն կա-
ռուցելու համար մղվող պայքարի խաղաղ ժամանակաշրջանում՝ պարտիական
ու պետական գործունեության բոլոր պոստերում Դուք Ձեզ հատուկ անխոնջ
եռանդով, տոկունությամբ և սկզբունքայնությամբ բոլոր ուժերը նվիրաբերում
եք սովետական ժողովրդի մեծ հաղթանակների նվաճմանը, նրա բարեկեցու-
թյան վերելքին, կոմունիզմի կերտմանը:

Ամբողջ սրտով ցանկանում ենք Ձեզ, մեր բարեկամ և ընկեր, մեր թան-
կագին Նիկիտա Սերգեևիչ, քաջառողջություն և երկար տարիների հետագա
բեղմնավոր գործունեություն ի բարօրություն սովետական ժողովրդի ու մեր
Հայրենիքի, ի բարօրություն կոմունիզմի:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏ